**Հավելված N 3**
**ՀՀ կառավարության 2006 թվականի**
**նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման**

**Ձև**

## ՀԱՅՏ
## Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

<table>
<tr><td>Ծրագրի անվանումը</td><td>Ջերմուկ քաղաքում մինչև 300 կվտ/ժ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցում</td></tr>
<tr><td>Մարզ</td><td>Վայոց ձոր</td></tr>
<tr><td>Համայնքը /համայնքները</td><td>Ջերմուկ համայնք /ք. Ջերմուկ, գ. Կեչուտ, գ. Գնդեվազ, գ. Հերհեր և գ. Կարմրաշեն/</td></tr>
<tr><td>Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից</td><td>Մայրաքաղաք Երևանից՝ 175 կմ, մարզկենտրոն Եղեգնաձորից՝ 50 կմ:</td></tr>
<tr><td>Համայնքի /բնակավայրի բնակչությունը</td><td>Ջերմուկ համայնք 9225 մարդ, Ջերմուկ քաղաք՝ 6326, գյուղ Կեչուտ՝ 1122, գյուղ Գնդեվազ 859, գյուղ Հերհեր՝ 696 և գյուղ Կարմրաշեն՝ 222:</td></tr>
<tr><td>Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի</td><td>Ջերմուկ համայնքը և նրանում ընդգրկված բնակավայրերը սահմանամերձ չեն, սակայն Ջերմուկ քաղաքն ընդգրկված է ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 756 որոշմամբ հաստատված ՀՀ բարձր լեռնային բնակավայրերի ցանկում</td></tr>
<tr><td>Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝<br>- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը,<br>- գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,<br>- ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների</td><td>
<table>
<tr><th>Հ/Հ</th><th>Բնակավայրը</th><th>Ջրամատակարարման տևողությունը</th><th>Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը</th><th>գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,</th><th>ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը</th><th>լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ</th></tr>
<tr><td>1</td><td>ք, Ջերմուկ</td><td>շուրջօրյա</td><td>100/100</td><td>98</td><td>5</td><td>90, ԼԵԴ լուսավորություն չկա</td></tr>
<tr><td>2</td><td>գ. Կեչուտ</td><td>շուրջօրյա</td><td>100/100</td><td>95</td><td>20/5,7</td><td>90, ԼԵԴ լուսավորություն չկա</td></tr>
<tr><td>3</td><td>գ. Գնդեվազ</td><td>շուրջօրյա</td><td>Ջրամատակարարում 100, ջրահեռացում 90</td><td>95</td><td>95/40</td><td>65, ԼԵԴ լուսավորություն չկա</td></tr>
<tr><td>4</td><td>գ. Հերհեր</td><td>շուրջօրյա</td><td>Ջրամատակարարում 100, ջրահեռացում 3</td><td>10</td><td>100/22,4</td><td>40, ԼԵԴ լուսավորություն չկա</td></tr>
<tr><td>5</td><td>գ. Կարմրաշեն</td><td>շուրջօրյա</td><td>Ջրամատակարարում 100, ջրահեռացում 0</td><td>0</td><td>60/1</td><td>արտաքին լուսավորության ցանց առկա չէ</td></tr>
</table>
</td></tr>
</table>

| | |
|---|---|
| **տոկոսը,**<br>**- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ** | |
| **Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը** | *Ջերմուկի համայնքապետարանը, ենթակա հիմնարկներն ու կազմակերպությունները յուրաքանչյուր փարի ծախսում են շուրջ 27594542 ՀՀ դրամի էլեկտրական էներգիա, որից 14482109 ՀՀ դրամը կազմում է արտաքին լուսավորության ցանցի էլեկտրական էներգիայի ծախսը: Նախատեսվում է Ջերմուկ քաղաքում կառուցել մինչև 300 կվտ/ժ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան: Արևային էլեկտրակայանների կառուցումը նախատեսվում է ինչպես համայնքային ենթակայության հիմնարկների և կազմակերպությունների տանիքներին, այնպես էլ քաղաքային ճոպանուղու վերին կանգառի հարակից տարածքում՝ ելնելով տանիքների օգտակար մակերեսից, կրող կոնստրուկցիաների վիճակից, այդ կազմակերպությանը էլեկտրական էներգիա սնուցող ենթակայանի հզորությունից: Հայաստանում արևային օրերի քանակը տարեկան շուրջ 300 օր է, ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում վերականգնվող՝ արևային էներգիայի զարգացման համար: Բացի այդ, Ջերմուկ համայնքն ընտրել է վերականգնվող էներգիայի զարգացմանն աջակցելու քաղաքականություն, որի արդյունավետ իրականացումը համայնքի համար կապահովի ինչպես դրամական միջոցների խնայողություն՝ փաստացի ծախսի մոտ 80 % չափով, այնպես էլ հավելյալ եկամուտ՝ դրանք ուղղելով համայնքային այլ խնդիրների լուծմանը: Կայանի կառուցումը հնարավորություն կտա նաև ավելացնել գիշերային լուսավորության ժամերի թիվը:* |
| **Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին** | *Ջերմուկ համայնքի ավագանին 2020 թվականի հունվարի 17-ի թիվ 18-Ա որոշմամբ հավանություն է տվել Ջերմուկ համայնքի ղեկավարի՝ Եվրոպական հանձնաժողովի «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը միանալու, դաշնագիր ստորագրելու և «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի» (ԿԷԶԳԾ) մշակմանն ու իրականացմանը աջակցելու վերաբերյալ առաջարկությանը՝ ընտրելով համայնքում վերականգնվող էներգիայի զարգացմանն աջակցելու քաղաքականություն:*<br>*Ծրագրի իրագործման արդյունքում կունենանք մինչև 300 կվտ/ժ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան՝ կառուցված*<br>*- Ջերմուկ համայնքի «Զատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի Ձախափնյա թաղամասի մասնաշենքի տանիքին մինչև 30կվտ, Կեչուտ գյուղի մասնաշենքի տանիքին մինչև 30կվտ,*<br>*«Ջերմուկ համայնքի Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի մասնաշենքի տանիքին մինչև 10կվտ և «Ջերմուկ համայնքի Ռոմանոս Մելիքյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի Կեչուտ գյուղի մասնաշենքի տանիքին մինչև 30կվտ հզորությամբ,*<br>*-Ջերմուկի քաղաքային ճոպանուղու վերին կանգառի սարալանջին՝ մինչև 200կվտ ժամ հզորությամբ:* |

| | |
|---|---|
| | Կավելանա գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ամռանը 4 ժամի փոխարեն 6, իսկ ձմռանը 6 ժամի փոխարեն 8 ժամով: Էլեկտրական էներգիայի փաստացի ծախսի մոտ 80 տոկոսը /մոտ 220756 ՀՀ դրամ/ կրճատելու արդյունքում դրամական միջոցների խնայողությունը կուղղվի համայնքային այլ խնդիրների լուծմանը:<br>1.5-2 տարում արտադրված էլեկտրական էներգիան կփոխատուցի համայնքի կողմից կատարված ծախսերը 100 տոկոսով: |
| Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները | Նախատեսվում է<br>-գնումներ գործընթացի կազմակերպում /նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերում, դրանց փորձաքննության, շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության, տեխնիկական, հեղինակային հսկողության ծառայությունների ձեռք բերում/<br>-արդյունքների ամփոփում, պայմանագրի կնքում,<br>-աշխատանքների իրականացում, հանձնաժողովի կողմից արդյունքների ընդունում և վերահսկողություն:<br>Համայնքային ենթակայության 4 կազմակերպությունների շինությունների տանիքներին՝ մոտ 540 քմ մակերեսին արևային ֆոտովոլտային կայանի կառուցում՝ /մինչև 100 կվտ/ժ հզորությամբ/ ելնելով այդ կազմակերպությանը էլեկտրական էներգիա սնուցող ենթակայանի հզորությունից՝ միաժամանակ իրականացնելով նշված մակերեսով տանիքի կայանը կրող կոնստրուկցիաների ամրացում:<br>Ճոպանուղու վերին կանգառի սարալանջին մինչև 200 կվտ/ժ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցում՝:<br>Շինությունների տանիքներին և սարալանջին կայանի վահանակները տեղադրել հարավային՝ արևահայաց լանջերին:<br>Իրականացնել համայնքային ենթակայության հիշյալ շինությունների տանիքածածկի կտրում, ճոպանուղու վերին կանգառի սարալանջին՝ հենարանների համար փոսերի փորում, մետաղական հենարանների մոնտաժում, ներկում, անհրաժեշտության դեպքում փայտե լրացուցիչ տարրերի տեղադրում, փայտե տարրերի հրապաշտպանություն, տարբեր հաստության պղնձե մալուխների մոնտաժում, արտադրվող և սպառվող էլ. էներգիայի երկկողմանի հաշվիչի տեղադրում, նախատեսել համապատասխան պաշտպանություն գերլարումներից, կարճ միացման հոսանքներից, ընտրել միացման սխեմայի օպտիմալ տարբերակ:<br>Արևային կայանը կառուցել բազմաբյուրեղ վահանակներից՝ նախատեսելով սթրինգային փոխակերպիչներ՝ ըստ տանիքներին նախատեսվող կայանների հզորության: Կայանը կառուցելիս հաշվարկել այդ կազմակերպությանը էլեկտրական էներգիա սնուցող ենթակայանի հզորությունը՝ միաժամանակ իրականացնելով նշված մակերեսով տանիքի՝ կայանը կրող կոնստրուկցիաների ամրացում: |
| Ծրագրի իրականացման արդյունքում համայնքի սեփականության | Ջերմուկ համայնքի «Ձափիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի Ջախափնյա թաղամասի և Կեչուտ գյուղի մասնաշենքերը, «Ջերմուկ համայնքի Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի և «Ջերմուկ համայնքի Ռոմանոս Մելիքյանի |

| | |
|---|---|
| **իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում, բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի** | *անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի Կեչուտ գյուղի մասնաշենքերը սեփականության իրավունքով պատկանում են Ջերմուկ համայնքին: Ջերմուկի քաղաքային ճոպանուղու վերին կանգառի սարալանջի տարածքը, որտեղ նախատեսվում է կառուցել արևային ֆոտովոլտային կայան, հանդիսանում է համայնքային սեփականության հողամաս:*<br>*Ծրագրի իրագործման արդյունքում շենքերի և հողամասի կադաստրային արժեքները կավելանան, քանի որ դրանով նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են:* |
| **Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա** | *Ծրագրի շահառուներն են համայնքի 9225 բնակիչները և համայնք այցելող բազմահազար հյուրերն ու զբոսաշրջիկները:*<br>*Ծրագրի իրագործման արդյունքում կայանը կապահովի մեկ ժամում մինչև 300 կվտ էլ. էներգիայի արտադրություն, կավելանա գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ամռանը 4 ժամի փոխարեն 6, իսկ ձմռանը 6 ժամի փոխարեն 8 ժամով: Ծրագրի իրականացման արդյունքում կապահովվի էլեկտրական էներգիայի փաստացի ծախսի մոտ 80 տոկոսը /մոտ 220756 ՀՀ դրամ/ կրճատում, իսկ խնայած միջոցները կօգտագործվեն համայնքային այլ խնդիրներ լուծելիս: Կայանի կառուցումը կապահովի համայնքային ենթակայության կառույցների և արտաքին լուսավորության ցանցի սպառող էլ. էներգիայի 80 տոկոսը:* |
| **Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը** | *Ծրագրի իրականացման ընթացքում կստեղծվի մինչև 11 ժամանակավոր աշխատատեղ: Արևային պանելի տեղադրման 1 ճարտարագետ և 3 որակավորված մասնագետ, 1 զոդող, տանիքի 1 թիթեղագործ, էլեկտրականության մոնտաժի 1 մասնագետ և 4 բանվոր:*<br>*Ծրագրի իրականացման արդյունքում մասնավոր հատվածից նախատեսվում է 1 հիմնական աշխատատեղ՝ երաշխիքային ժամկետում կայանի սպասարկումն իրականացնելու համար:*<br>*Համայնքապետարանի կողմից հիմնական աշխատատեղ կայանի երաշխիքային սպասարկման ժամկետում չի նախատեսվում:* |

**Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը**

*Նախորդ տարվա բյուջեն՝ 768930020 դրամ.*

| | Պլանը | Փաստացին | Տոկոսը |
|---|---|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները*** *այդ թվում՝* | 521863572 | 528372439 | 101.25 |
| *-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* | 487887512 | 486327401 | 99.68 |
| *- Սեփական եկամուտներ* | 374656112 | 372732301 | 99.49 |
| *-Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | 33976059 | 42045038 | 123.75 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | 768930020 | 605385117 | 78.73 |
| *- Վարչական բյուջեի ծախսեր* | 498000000 | 482026201 | 96.79 |
| *-Ֆոնդային բյուջեի ծախսեր* | 270930020 | 123358916 | 45.53 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը,*** *որից՝* | 270930020 | 123358916 | 45.53 |
| *- ճանապարհաշինություն* | 16150000 | 16070760 | 99.51 |
| *- ջրամատակարարում* | 1000000 | 0 | 0 |
| *- փողոցային լուսավորություն* | 25000000 | 18537723 | 74.15 |
| *- գյուղատնտեսություն* | 0 | 0 | 0 |

| Ծախսատեսակ / Հիմնարկ | Տարվա պլանը (դրամ) | Փաստացի ծախսը (դրամ) |
|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ ՝ | 270930020.00 | 123358916.00 |
| ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ Ջերմուկ համայնքի ,,սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության մշակույթի կենտրոն,,ՀՈԱԿ (900362066012) | 35953000.00 | 17622110.00 |
| ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ Կարմրաշենի վարչական բնակավայր (900342130029) | 2100000.00 | 0.00 |
| ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ բնակարանային շինարարություն (900362040231) | 35445500.00 | 0.00 |
| ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ քաղաքապետարանի հիմնարկի պահպանման ծախսեր) (900362040082) | 15300000.00 | 4310700.00 |
| Ջերմուկի համայնքի ճոպանուղի վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություն (900362052012) | 4700000.00 | 2958400.00 |
| «ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ հիմնարկի պահպանման ծախսեր (900362049026) | 1070000.00 | 1050106.00 |
| ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ նախադպրոցական կրթություն (900362040405) | 5150000.00 | 1830000.00 |
| ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ նախադպրոցական կրթություն (900362040272) | 46650000.00 | 17248970.00 |
| ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ճանապարհային տրանսպորտ (900362000086) | 27692500.00 | 17848760.00 |
| ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ համայնքների զարգացում (900362000110) | 8095200.00 | 1740000.00 |
| ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ փրկարար ծառայություն (900362000144) | 2600000.00 | 2503000.00 |
| ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ կեղտաջրերի հեռացում (9003620000037) | 1000000.00 | 0.00 |
| ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ զբոսաշրջության զարգացում (900362040157) | 20880000.00 | 4355027.00 |
| ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ընդհանուր բնույթի այլ ծառայություններ (900362040108) | 988800.00 | 988800.00 |

| | | |
|---|---|---|
| ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում (900362040348) | 25000000.00 | 18537723.00 |
| ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ Հերիերի վարաչական բնակավայր (900342131027) | 5775000.00 | 1586000.00 |
| ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ նախադպրոցական կրթություն (900362000201) | 28930020.00 | 28930020.00 |
| ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ Կեչուտ կառավարման մարմինների պահպանում (900362000136) | 1050000.00 | 434500.00 |
| ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ Ջերմուկ քաղաքի արվեստի N 1 դպրոց ՀՈԱԿ (900362053010) | 1500000.00 | 994800.00 |
| ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ Գնդեվազի վարչական բնակավայր (900362060064) | 1050000.00 | 420000.00 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՝ | 270930020.00 | 123358916.00 |

**Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն**

*745000000 դրամ.*

*Ներկայացնել ընթացիկ փարվա կանխափեսվող եկամուփները, պլանավորված ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:*

| | Պլանը |
|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում*** *այդ թվում՝* | 574946230 |
| - *Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* | 524421313 |
| - *սեփական եկամուտներ* | 388248833 |
| - *Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | 50524917 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | 745000000 |
| - *Վարչական բյուջեի ծախսեր* | 538835000 |
| -*Ֆոնդային բյուջեի ծախսեր* | 206165000 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը,*** *որից՝* | |

| **Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ** | **Գումար** |
|---|---|
| **Ծրագիր 4** Բնակչությանը մատուցվող ծառայությունների արդիականացում | **2500000** |
| **Միջոցառում** | |
| Հերիեր բնակավայրի վարչական շենքի հիմնանորոգում և կահավորում | 1000000 |
| Կարմրաշեն բնակավայրի գրասենյակի հիմնանորոգում և կահավորում | 1500000 |

| | | |
|---|---|---|
| | Ոլորտ 2. Պաշտպանություն | **3198000** |
| | Ոլորտ 3. Հասարակական կարգ, անվտանգություն և դատական Գործունեություն | |
| | Ծրագիր 2.Փրկարար ծառայություն | |
| | **Միջոցառում** | |
| | Համայնում բնական աղետներից բնակչության կրած վնասների հիմնանորոգում | **3198000** |
| | Ոլորտ 4. Տնտեսական հարաբերություններ | **114767000** |
| | Ծրագիր 4 Համայնքի բնակավայրերի զարգացում | |
| | **Միջոցառում** | |
| | Ջերմուկ համայնքի ճոպանուղու առկա շինությունների վերանորոգում, նորերի կառուցում, /ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը/ | 25000000 |
| | Գնդեվազ գյուղից դեպի Գնդեվանք վանական համալիր տանող ճեմուղու կառուցում, Ջրվեժի փողոցում ավտոկայանատեղիի կառուցում և քանդված ճանապարհի վերականգնում, Բ. Վարդանյան, Շահումյան և Մյասնիկյան փողոցների մայթի բազալտով սալիկապատում, Մաշտոցի փողոցի աջակողմյան մայթի ասֆալտապատում, ճոպանուղու հարակից տարածքի ասֆալտապատում, Մաշտոցի փողոցի բաժանարար գոտու բարեկարգում և կանաչապատում | 53767000 |
| | Մինչև 300 կվտ/ժ արևային ֆոտովոլտային կայանի կառուցում՝ ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթեր | 35000000 |
| | Համայնքի զբոսաշրջային գովազդը ապահովող հուշանվերների, քարտեզների, բուկլետների տպագրում, կինոֆիլմի, գովազդային հոլովակների նկարահանում | 1000000 |
| | Ոլորտ 5. Շրջակա միջավայրի պաշտպանություն | |
| | Ոլորտ 6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ | **30000000** |
| | Ծրագիր 04. փողոցների լուսավորում | |
| | **Միջոցառում** | |
| | Կեչուտ, Գնդեվազ, Հերհեր և Կարմրաշեն գյուղական բնակավայրերում արտաքին լուսավորության ցանցի կառուցում, էներգախնայող լամպերի տեղադրում | 30000000 |
| | Ոլորտ 7. Առողջապահություն | |
| | Ոլորտ 8. Հանգիստ, մշակույթ և կրոն | **16200000** |
| | Ծրագիր 02. Մշակութային ծառայություններ | |
| | **Միջոցառում** | |
| | Համայնքային ենթակայության Ջերմուկի հանրային գրադարանի գրքային ֆոնդի համալրում | 500000 |
| | Համայնքային մշակութային կենտրոնում կահավորում | 15700000 |
| | Ոլորտ 9. Կրթություն | **39500000** |
| | Ծրագիր 03. համայնքի նախադպրոցական կրթություն | |
| | **Միջոցառում** | |
| | Համայնքի ենթակայության մանկապարտեզներում կահավորում հարմարավետ պայմանների ստեղծում | 12000000 |

| | | |
|---|---|---|
| | Համայնքի ենթակայության արվեստի դպրոցների կահավորում, հարմարավետ պայմանների ստեղծում | 2500000 |
| | Մանկական զարգացման կենտրոնի և դրան կից խաղահրապարակի կառուցում, «Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մասնաշենքի մասնակի վերանորոգում, մանկապարտեզների բակերի բարեկարգում | 25000000 |
| **Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով** | Համայնքի բյուջեով նշված ծրագրի ամբողջական իրագործումն անհնար է, այս ոլորտին ուղղված համապատասխան ֆինանսական միջոցների սղության պատճառով՝ համաձայն համայնքի բյուջեի ֆոնդային մասի «Ոլորտ 4. Տնտեսական հարաբերություններ» բաժնի «Ծրագիր 04. Համայնքի բնակավայրերի զարգացում» մասի 3-րդ միջոցառման և 2020թ/-ի ՏԱՊ ֆինանսավորման պլանի /ներկայացվում է ստորև/:<br>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն<br>1. Փողոցային լուսավորության անխափան աշխատանքի ապահովում՝ 21107.5<br>2. Գնդեվազ, Հերհեր և Կարմրաշեն գյուղական բնակավայրերում արտաքին լուսավորության ցանցի կառուցում, էներգախնայող լամպերի տեղադրում՝ 9061.0,<br>3. Ջրահեռացման համակարգի սպասարկում և վերանորոգում՝ 8491.7<br>4. Համայնքի բնակարանային ֆոնդի սպասարկում՝ 2474.0<br>5. Մինչև 300 կվտ/ժ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցում՝ 35000.0,<br>Ընդամենը՝ 76134.2 | |
| **Ծրագրի ընդհանուր բյուջեն,**<br><br>**այդ թվում՝**<br><br>**- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը՝**<br><br>**- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝**<br><br>**- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝**<br><br>**- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝** | *100000000 դրամ (100%)*<br><br><br><br>2000000 դրամ<br><br>1500000 դրամ<br><br>2500000 դրամ<br><br>700000 դրամ | |

| | |
|---|---|
| - գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝<br><br>ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը | 1000000 դրամ<br><br>0 դրամ |
| Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը | *35000000 դրամ (35%)* |
| Այլ ներդրողներ | *Այլ ներդրողներ չկան:* |
| Ծրագրի իրականացման տևողությունը | *Սկիզբը՝ հուլիս 2020թ.* *Տևողությունը 5 ամիս* |
| Ծրագրի ծախսերը | *Նախագծանախահաշվային փասփաթղթերը գտնվում են մշակման փուլում:* |
| Ամսաթիվ | *24 հունվարի 2020 թ.* |

**Համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու՝ Ստեփանոս Վարդանյան**

**Հեռ.՝ 077.57.75.60, էլ.փոստ՝ Vardanyan.Stepan@mail.ru**

Համայնքի ղեկավար՝ Վարդան Հովհաննիսյան

Կ. Տ

**ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԻՆՉԵՎ 300 ԿՎՏ/Ժ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

| | |
|---|---|
| *Աշխատանքի անվանումը* | *Ջերմուկ քաղաքում մինչև 300 կվտ/ժ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցում* |
| *Ընդհանուր նկարագրություն* | *Անհրաժեշտ է՝*<br>✓ *Տարածքի ինժեներաերկրաբանական հետազոտության և գոյություն ունեցող շենքերի և շինությունների փաստացի տեխնիկական վիճակի հետազոտության իրականացում,*<br>✓ *Արևային կայանի կառուցում Ջերմուկ համայնքի «Զատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի Ձախափնյա թաղամասի և Կեչուտ գյուղի մասնաշենքերի տանիքներին,*<br>✓ *Արևային կայանի կառուցում «Ջերմուկ համայնքի Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի և «Ջերմուկ համայնքի Ռոմանոս Մելիքյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի Կեչուտ գյուղի մասնաշենքերի տանիքներին,*<br>✓ *Արևային կայանի կառուցում Ջերմուկի քաղաքային ճոպանուղու վերին կանգառի սարալանջին:* |
| Ներկայացվող հիմնական պահանջներ, տեխնիկական առաջադրանք | Համայնքային ենթակայության 4 կազմակերպությունների շինությունների տանիքներին՝ Ջերմուկ համայնքի «Զատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի Ձախափնյա թաղամասի մասնաշենքի տանիքին մինչև 30կվտ, Կեչուտ գյուղի մասնաշենքի տանիքին մինչև 30կվտ, «Ջերմուկ համայնքի Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի մասնաշենքի տանիքին մինչև 10կվտ և «Ջերմուկ համայնքի Ռոմանոս Մելիքյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի Կեչուտ գյուղի մասնաշենքի տանիքին մինչև 30կվտ հզորությամբ (ընդհանուր մոտ 540 քմ մակերեսում) արևային ֆոտովոլտային կայանի կառուցում (ընդհանուր հզորությունը մինչև 100 կվտ/ժ): Արևային կայանը կառուցել բազմաբյուրեղ վահանակներից՝ նախատեսելով սթրինգային փոխակերպիչներ՝ ըստ տանիքներին նախատեսվող կայանների հզորության: Կայանը կառուցելիս հաշվարկել այդ կազմակերպությանը էլեկտրական էներգիա սնուցող ենթակայանի հզորությունը՝ միաժամանակ իրականացնելով նշված մակերեսով տանիքի՝ կայանը կրող կոնստրուկցիաների ամրացում:<br>Ճոպանուղու վերին կանգառի սարալանջին մինչև 200 կվտ/ժ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցում:<br>Շինությունների տանիքներին և սարալանջին կայանի վահանակները տեղադրել հարավային՝ արևահայաց լանջերին:<br>Իրականացնել համայնքային ենթակայության հիշյալ շինությունների տանիքածածկի կտրում, ճոպանուղու վերին կանգառի սարալանջին՝ հենարանների համար փոսերի փորում, մետաղական հենարանների մոնտաժում, ներկում, անհրաժեշտության դեպքում փայտե լրացուցիչ տարրերի տեղադրում, փայտե տարրերի հրապաշտպանություն, տարբեր հաստության պղնձե մալուխների մոնտաժում, արտադրվող և սպառվող էլ. էներգիայի երկկողմանի հաշվիչի տեղադրում, նախատեսել համապատասխան պաշտպանություն գերլարումներից, կարճ միացման հոսանքներից, ընտրել միացման սխեմայի օպտիմալ տարբերակ: |
| Ընդհանուր դրույթներ | Աշխատանքային նախագիծը կազմվում է՝<br>ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» պահանջներին համապատասխան, ճարտարապետահատակագծային և |

| | |
|---|---|
| | նախագծման առաջադրանքներին, թերությունների ակտին համապատասխան:<br>Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:<br>Նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացվում են փորձաքննության դրական եզրակացությամբ:<br>**Նախագիծը կազմվում, իսկ փորձաքննությունն իրականացվում է լիցենզավորված կազմակերպության կողմից:**<br>Նախատեսվում է հեղինակային հսկողություն, նախագծողը իրականացնում է հեղինակային հսկողություն աշխատանքների կատարման ողջ ընթացքում:<br>ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման համաձայն նախագծողը՝<br>ա/նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,<br>բ/ ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի /կոնստրուկցիաներ և այլն/ և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,<br>գ/ ներկայացնում է շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,<br>դ/ նախագծնախահաշվային փաստաթղթերը ներկայացնում է պատվիրատուին թղթային՝ 4 օրինակից և էլեկտրոնային տարբերակներով,<br>ե/ ներկայացնում է ըստ առանձին աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը,<br>ինչպես նաև, ներկայացնում է աշխատանքների կատարման ծավալաթերթ՝ էլեկտրոնային տարբերակով, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%):<br>Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմված են 2 մասից՝<br>**-Ճարտարապետաշինարարական մաս**. Ներառում է<br>Ելակետային տվյալներ և նախագծային փաստաթղթեր //հատակագիծ /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համապատասխան մասի լուսապատճեն/, տեխնիկական բնութագիր, ճարտարապետահատակագծային առաջադրանք, լիցենզիա /քաղաքաշինական փաստաթղթերի մշակման բնագավառ՝ բնակելի, հասարակական և արտադրական ոլորտ/, տեխնիկական վիճակի հետազննության եզրակացություն /ըստ անհրաժեշտության/, ընդհանուր բացատրագիր, հատակագծեր, շինարարության և քանդման կազմակերպման նախագծեր, հիմնական շինարարական նյութերի, կոնստրուկցիաների ամփոփագրեր, մասնագրեր, աշխատանքների կատարման ուղեցույց, աշխատանքների կատարման ժամանակացույց, աշխատանքային գծագրեր, աշխատանքային ծավալներ/, բացատրագրեր,<br>-***Նախահաշվային մաս՝*** ամփոփ, օբյեկտային, լոկալ նախահաշիվներ<br>Վերանորոգման աշխատանքների ընթացքը համապատասխանեցվում է պատվիրատուի հետ: Աշխատանքային նախագծի ընդհանուր փաթեթը ներկայացնել հայերեն լեզվով:<br>Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառմամբ, ընթեռնելի: |
| ***Հիմնական պարտականություններ և պահանջներ*** | ***Հիմնական պարտականություններ՝***<br>1.հետազննման աշխատանքների իրականացում,<br>2.նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում,<br>***Հետազննման վերաբերյալ պահանջներ՝***<br>• հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու անհրաժեշտ ծավալով,<br>• հետազննման ընթացքում իրականացնել շենքերի տանիքների առկա վիճակի |

| | |
|---|---|
| | տեսանկարահանում:<br>***Նախագծի նկատմամբ պահանջներ***<br>• Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, հրահանգներին, քաղաքաշինական նորմերին:<br>• Նախագծի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝<br>***Համաձայնեցումներ՝***<br>• քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացությունը պետք է լինի դրական,<br>• նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ,<br>• տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցնել շինարարական աղբի տեղերը |
| ***Նորմատիվային պահանջներ*** | • Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան:<br>• Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:<br>• Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել համաձայն ՀՀ-ում գործող նորմատիվային փաստաթղթերի: |

***Համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու՝ Ստեփանոս Վարդանյան***

***Հեռ.՝ 077.57.75.60, էլ.փոստ՝ Vardanyan.Stepan@mail.ru***

***Համայնքի ղեկավար՝*** ***Վարդան Հովհաննիսյան***

Կ.Տ.